ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 166-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՆԵՂՈՑ 06-080-0107-0071 ԵՎ 06-080-0107-0070 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ, ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21/06/2022 ԹԻՎ 147-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 4-րդ մասի, 43-րդ հոդվածի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետի, Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի << ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին»թիվ 1066-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի 28/06/2022 թիվ՝ Կ-28062022-06-0123 (գաղտնաբառ՝ NZF64NBOKMWM) և 28/06/2022 թիվ ՝ Կ-28062022-06-0064 (գաղտնաբառ՝ 52SOXFW6FAAZ) կասեցման որոշումները

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք գյուղ Նեղոց 06-080-0107-0070 ծածկագրի 0.22047 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել 4-րդ կարգի գյուղատնտեսական խոտհարք նշանակության հողամասի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք գյուղ Նեղոց 06-080-0107-0071 ծածկագրի 0.99655 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել 4-րդ կարգի գյուղատնտեսական խոտհարք նշանակության հողամասի:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուցհետո՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

4. Հողամասերն ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության «Հողայինօրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

6. Ուժը կորցրած ճանարել Ախթալա համայնքի ղեկավարի 21/06/2022 թվականի թիվ 147-Ա որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 167-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 15-ի <<ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 74-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի բնակիչ Վալերի Բեժանյանի հայտը

Որոշում եմ՝

1. Թույլատրել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի բնակիչ Վալերի Բեժանյանին 2022 թվականի հուլիսի 1-ից 2022 թվականի սեպտեմբերի 31-ն ներառյալ ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:

2. Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար **Ա.ԹԱՄԱՉՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 168-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 15-ի <<ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 74-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի բնակիչ Ռուդիկ Փարսադանյանի հայտը

Որոշում եմ՝

1. Թույլատրել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի բնակիչ Ռուդիկ Փարսադանյանին 2022 թվականի հուլիսի 1-ից 2022 թվականի սեպտեմբերի 31-ն ներառյալ ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:

2. Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 169-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ ՀՈՒԼԻՍԻ՝ 8-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, 17-րդ հոդվածով՝

Որոշում եմ.

2022 թվականի հուլիսի 8-ին, ժամը՝ 15:00-ին, ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարանում գումարել ավագանու արտահերթ թիվ 7 նիստը՝ հետևյալ օրակարգով՝

1. 1.ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 8- ի արտահերթ թիվ 7 նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի և Ախթալա համայնքի Նեղոց բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում առաջարկվող հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների մասին:
3. <<Ախթալա համայնքի Շամլուղ, Ճոճկան, Նեղոց բնակավայրերում ջրատարերի, Ճոճկան գյուղում 'ՕԿՋ-ի կառուցում>> 2022 թվականի սուբվենցիոն ծրագրում փոփոխություն կատարելու մասին
4. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի սեփականություն հանդիսացող գույքի՝մշակույթի տան շենքից վարձակալությամբ սենյակներ տրամադրելու մասին:
5. ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարանին պատկանող գույքերը օգտագործման տրամադրելու համար վարձավճարներ սահմանելու մասին:

6. ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարանին պատկանող գույք հանդիսացող հենասյուները օգտագործման տրամադրելու մասին:
7. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու2021 թվականի դեկտեմբեր ի 15-ի << ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին>>թիվ 76-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,
8. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի 2022 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին ,
9. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի 2022 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին ,
10. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Մեծ Այրում գյուղի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի շենքից 180 քմ մակերեսով տարածք անհատույց օգտագործման տրամադրելու և ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Մեծ Այրում գյուղի վարչական ղեկավարի նստավայրը տեղափոխելու մասին,
11. Հողատեսքերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելուն համաձայնություն տալու մասին,
12. Լոռու մարզի Ախթալա համայնքի «Տեղական ակտիվ խումբ» ստեղծելու մասին,
13. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու, աճուրդի մեկնարկային գին, մասնակցության վճար և աճուրդի քայլի չափը սահմանելու մասին ,
14. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ընտանիքներին զավակի ծնվելուց միանվագ գումար հատկացնելու մասին,
15. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում հարազատին կորցրած յուրաքանչյուր ընտանիքին միանվագ գումար հատկացնելու մասին,
16. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 170-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽԹԱԼԱ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՇՏՎԱԾ /ՓՈՓՈԽՎԱԾ/ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի դրույթներով, ի կատարումն ՀՀ կառավարության 2005թվ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման և հիմք ընդունելով Ախթալա համայնքի ավագանու 2009թվ.-ի սեպտեմբերի 30-ի թիվ 65-Ա որոշումը, հիմք ընդունել համայնքի կադաստրային քարտեզը և հաշվի առնելով համայնքի անշարժ գույքերի վերահասցեավորման անհրաժեշտությունը

Որոշում եմ՝

1.Քաղաք Ախթալա, Աբովյան փողոց, 21, 2-րդ մուտք, 5 բնակարան հասցեի անշարժ գույքը, վերահասցեավորել՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ախթալա, քաղաք Ախթալա, Խ. Աբովյան փողոց, 21 շենք, 26 բնակարան հասցեի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**